(1921—27)· կը հրաժարի միաբանութենէն և կը մեկնի Ամերիկա։

ՆԸՍԷՖ ԿՈԽՍԱՆ.— 1651ին Ս. Յակոբի վանքին կը յիշատակէ Սաղմոս և Յա. ուղի ձեռագիրը (ՄՁ. Թ. 1651) հետևեալ յիշատակարանով. «... Դարձեալ յիշեսջիք... զվերջին ստացող սուրբ սաղմոսարանիս որ... վասն որոյ և այս կուսակրաւն Նըսէֆ անուն աղջիկս ցանկացաւ այս անուշահոտ բուրաստանիս և ստացաւ զսա ի հալալ վաստակօք և իւր ձեռագործով, ոչ թէ յայլոց աղերսեալ է. այլ իւրեան կարիքն է կտրեր և զհոգին պայծառացուցեր և ետ յիշատակ ի սուրբ Երուսաղէմ. ի հայր. հայկազունիս տէր Ածատուր. մեծ րաբունիս... ի թուաբերութեան հայոց տպգիս ՌՃ (=1651) երորդ ամի»։ (Խաչ. Ցուց. տետր. 19. էջ 2211)։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲ.— Մբ. 1701ին։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՊՍ. ԿԻՒՆԷՍԷՐԵԱՆ.— Մբ. Սսոյ. կնիքը 1842. ուխտաւորութեամբ կայցելէ Ս. Յակոբի վանքը 1851ին. Առ. Հալէպի. ապա ինքնընտիր կԹղ. Սսոյ և գիշերային գաղտնի օծուած 1866 Յունիս 11ին։ Նիկողայոս եպս. Պոլիս կը բերուի Բ. Դրան միջոցաւ և յետոյ պետական թոյլտուութեամբ Սիս կը դառնայ. իսկ պատրիարքարանի բողոքին վրայ ընդ հսկողութեամբ 1871 Օգոստ. 14ին Պոլիս կը բերուի և 29 Սեպտ.ին ալ իբր աքսորական Արմաշու վանքը կը փոխադրուի։ Կայսերական փոփոխութեան հետևանքով ազատութիւն կը գտնէ և Պոլիս գալով 1876ին գրաւոր կերպով կաթողիկոսական աթոռէն կը հրաժարի և հրամանաւ պատրիարքարանի Ատանա կը մեկնի իբր սոսկ եպիսկոպոս և հոն կը վախճանի 1880ին և կը թաղուի Ս. Ածածին. եկեղեցիին բակը։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՊՍ?.— Սպասաւոր Ս. Երուսաղէմայ և յուսարար յուսաբուղխ Ս. Գերեզմանին Քրիստոսի։ ՌՂԳ (=1644) թուին անոր խնդրանքովը, անծանօթ գրիչ մը Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Սիւնեաց Առաքել եպս.ի Ադամ գիրքը և Տնօրինական Ս. Տեղեաց վերաբերեալ զանազաններու տաղերը (ՄՁ. Թ. 1417)։ Նոյն ձեռագիրին յիշատակարանին մէկ մասը կը դընենք հոս նոյնութեամբ. «... կատարեցաւ սա Տաղարանս ի աստուածակոխ սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ. ի թուականիս հայոց ՌՂԳ (=1644) Հոկտ. ամսոյ իա ին